

**«ՀԱՄԱՍՏՎԱԾ Ի»**

«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ Խորհրդի  
« 14 » նոյեմբեր\_2008 թ.  
\_\_\_\_\_ թիվ որոշմամբ

**Խորհրդի նախագահ՝**

Յու Սկրտումյան \_\_\_\_\_



ՏՊԷՉ Ծ à ð à ò ì Î ! ö ´ À

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

**Կ Ա Ր Գ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգի նպատակներն են սահմանել «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ, այսուհետ՝ Վարկային կազմակերպության վարկավորման գործընթացի մոնիտորինգի իրականացման ընթացակարգը և մոնիտորինգի գործընթացին մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները:
- 1.2. Սույն կարգի իմաստով՝
  - Վարկավորման գործընթացը վարկի, վարկային գծի, երաշխիքի, երաշխավորության, օվերդրաֆտի, այսուհետ՝ Վարկի տրամադրման գործընթացի և ընթացակարգերի ամբողջությունն է:
  - Հաճախորդը այն իրավաբանական, ֆիզիկական անձինք և անհատ ձեռներեցներն են, որոնք դիմել են Վարկային կազմակերպություն վարկավորման գործընթացով վարկային գործարք կնքելու նպատակով և որոնք հանդես են գալիս որպես վարկառու(փոխառու):
- 1.3. Մոնիտորինգի գործընթացը կազմակերպում և իրականացնում է վարկային բաժինը
- 1.3.1. Վարկային բաժինը իրականացնում է.
  - Հաճախորդի վճարային պարտավորությունների կատարման մոնիտորինգ,
  - Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգ,
  - Հաճախորդի/երաշխավորողի ֆինանսատնտեսական վիճակի մոնիտորինգ,
  - Վարկի ապահովվածության մոնիտորինգ,
  - Հաճախորդի դրամական հոսքերի ապահովման մոնիտորինգ,
  - Հաճախորդի դրամական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման նախազգուշացմանն ուղղված միջոցառումներ :
- 1.4. Վարկի տրամադրման պահից մինչև Հաճախորդի պարտավորությունների ամբողջովին կատարումը, վարկային բաժնի համապատասխան աշխատակիցները իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են վարկավորման գործընթացի մոնիտորինգ:
- 1.5. Մոնիտորինգը իրականացվում է հետևյալ տվյալների հիման վրա.
  - Վարկավորման գործընթացի պայմաններին համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթեր,
  - Արտաքին աղբյուրներից ստացված տվյալներ և տեղեկություններ (պարբերական հրատարակումներ, ինտերնետ և այլն):
- 1.6. Մոնիտորինգը իրականացվում է հետևյալ մեթոդներով.
  - Փաստաթղթային ստուգում,
  - Հաճախորդի գործունեության վայրի այցելություն
  - Հաճախորդի գործունեության բիզնես-ցուցանիշների, ֆինանսական վիճակի, վարկի ապահովվածության որակի վերլուծություն:
- 1.6.1. Վարկի նպատակային օգտագործումը վերահսկելու նպատակով իրականացվում է ըստ վարկավորման գործընթացի դրամական միջոցների շարժը բնութագրող փաստաթղթերի ստուգում հետևյալ ուղղություններով.
  - պահեստի մնացորդի և հաշվապահական ձևակերպումների (հաշվառման) վերլուծություն և վարկի միջոցով ձեռք բերված միջոցների առկայության ստուգում,
  - վարկի միջոցով ձեռք բերված միջոցների վերաբերյալ մաքսային, տրանսպորտային և այլ փաստաթղթերի համապատասխանության ստուգում:
- 1.6.2. Հաճախորդի գործունեության վայրի այցելության միջոցով ստուգումը իրականացվում է հետևյալ նպատակներով.
  - վարկային միջոցներով ձեռք բերված ապրանքա-նյութական արժեքները պահեստ մուտքագրվելուց՝ պայմանագրով ամրագրված մատակարարման պայմանների ստուգման նպատակով,
  - գրավի առարկայի պահպանությունն ու առկայությունը տեսնելու նպատակով,
  - վարկային միջոցների հաշվին նախատեսվող աշխատանքների իրականացման հավաստիացման նպատակով
- 1.6.3. Ֆինանսական վիճակի և բիզնես ցուցանիշների վերլուծությունը իրականացվում է վարկային գործարքի գործողության ամբողջ ընթացքում:
- 1.7. Մոնիտորինգի ցանկացած ուղղությամբ Հաճախորդի գծով բացասական տեղեկատվության առկայության դեպքում, վարկային բաժինը գործադիր տնօրենի կարգադրությամբ սահմանում է Հաճախորդի պարտավորությունների կատարման նախազգուշացմանն ուղղված միջոցառումներ և ապահովում է դրանց կատարումը:

## 2. ՀԱՃԱԽՈՐՂԻ ԴՐԱՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ (ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ) ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

- 2.1. Հաճախորդի վճարային պարտավորությունների ապահովման չկատարման միտումների հայտնաբերման միջոցառումները ներառում են.
- Վճարային պարտավորությունների կատարման մոնիտորինգ,
  - Հաճախորդի ֆինանսական վիճակի մոնիտորինգ,
  - Հաճախորդի գործունեության բիզնես-ցուցանիշների մոնիտորինգ,
  - Ապահովվածության մոնիտորինգ,
  - Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգ,
  - Հաճախորդի դրամական հոսքերի պահպանման մոնիտորինգ:
- 2.2. Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող իրավասու մարմնի/անձի կողմից կարող են սահմանվել մոնիտորինգի համար անհրաժեշտ այլ միջոցառումներ:
- 2.3. **Վճարային պարտավորությունների կատարման մոնիտորինգը** ներառում է վարկավորման գործընթացի պայմաններով սահմանված տոկոսների վճարման և հիմնական գումարի ժամանակին մարման հսկողությունը:
- Մոնիտորինգը իրականացվում է վարկավորման գործընթացի շրջանակներում բացված վճարային փաստաթղթերի, հաշվի քաղվածքների հիման վրա:
- 2.4. **Ֆինանսական վիճակի մոնիտորինգը** իրականացվում է ելնելով Հաճախորդի դասից, վարկավորման գործընթացի ժամկետից և չափից՝ որպես կանոն եռամսյակային կտրվածքով: Ֆինանսական վիճակի գնահատման արդյունքների հիման վրա կազմվում է անալիտիկ հաշվետվություն:
- 2.5. **Հաճախորդի գործունեության բիզնես-ցուցանիշների մոնիտորինգը ներառում է.**
- Հաճախորդի ընթացիկ կրեդիտորական պարտավորությունների կատարման հսկում,
  - Հաճախորդին սնանկ ճանաչելու գործընթացի հսկում,
  - դատարանի որոշումով նոր պարտավորություններ ի հայտ գալու հսկում,
  - ֆինանսական վիճակի գնահատման նպատակով բանկերում առկա հաշիվներով դրամական միջոցների շրջանառության հսկում,
  - Շուկայում Հաճախորդի դիրքի հսկում,
  - Հաճախորդի սեփականատերերի կառուցվածքի փոփոխության հսկում,
  - Պետական մարմինների հետ հարաբերությունների փոփոխության հսկում,
  - արտադրության ծավալի հսկում,
  - արտադրանքի տեսականու հսկում:
- 2.5.1. Ընթացիկ վարկային պատմության և կրեդիտորների հետ հարաբերությունների, այդ թվում բյուջեի նկատմամբ պարտավորությունների հսկումը իրականացվում է Հաճախորդի կողմից նոր վարկերի ստացման և կրեդիտորների նկատմամբ, այդ թվում բյուջեի և այլ բանկերի նկատմամբ ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկությունների հիման վրա:
- 2.5.2. Հաճախորդին սնանկ ճանաչելու գործընթացի և դատարանի որոշումով նոր պարտավորությունների ի հայտ գալու հսկումը իրականացվում է սնանկ ճանաչելու գործընթացի մասին ծանուցման տեղեկության և Հաճախորդի հաշվին ներկայացված կատարողական թերթիկների հիման վրա:
- 2.5.3. Հաճախորդի արտադրության ծավալի մոնիտորինգը իրականացվում է արտադրանքի գների էական տատնումների դեպքում:
- Արտադրանքի տեսականու մոնիտորինգը իրականացվում է պահանջարկի սեզոնային կտրուկ փոփոխություններով բնութագրվող ճյուղերի համար:
- 2.6. **Ապահովվածության մոնիտորինգը** ներառում է.
- գրավի մոնիտորինգ,
  - անհրաժեշտության դեպքում երաշխավորություն տված անձի ֆինանսական վերլուծություն
- 2.6.1. Գրավի մոնիտորինգը կատարվում է վարկավորման գործընթացով սահմանված պայմանների և գրավի առարկայի ընթացիկ արժեքի, իրացվելիության և պահպանման համապատասխանության սկզբունքով:
- 2.6.2. Գրավի մոնիտորինգը իրականացվում է ելնելով.
- գրավի տեսակից,

- վարկավորման գործընթացի վրա գրավի ազդեցության աստիճանից,
- գրավի առարկայի գտնվելու վայրից և կարգից,
- գրավի առարկայի յուրահատկությունից:

2.6.3. Գրավի մոնիտորինգի ընթացքում իրականացվում է գրավի գտնվելու վայրում գրավի առարկայի առկայության և պահպանման ստուգում: Գրավադրված գույքի պահեստային և հաշվապահական ձևակերպումների տվյալներով ստուգման ընթացքը կատարվում է Հաճախորդի անմիջական ներկայությամբ:

Հաճախորդի ժամկետանց պարտավորությունների դեպքում կատարվում է գրավի առարկայի պարտադիր ստուգում:

2.7. **Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգը** կատարվում է վարկի նպատակային օգտագործմանը համապատասխանող վճարման հիմքերով՝ ղեկավարվելով վճարային փաստաթղթերի տեղեկություններով:

Մոնիտորինգը իրականացվում է հետևյալ կարգով.

- վարկային միջոցների հաշվին կատարվող յուրաքանչյուր վճարման ստուգում,
- վարկային միջոցների հաշվին կատարվող վճարման վերահսկում և հաստատում,
- Հաճախորդի կողմից ներկայացված պայմանագրերի տեղեկությունների հիման վրա վարկի նպատակային նշանակության հետ վճարման հիմքերի համապատասխանության ստուգում,
- վարկային միջոցների հաշվին ձեռք բերված գույքի նպատակային օգտագործման ստուգում (եթե դա նախատեսված է վարկավորման գործընթացով):

2.8. **Հաճախորդի դրամական հոսքերի ապահովման մոնիտորինգը** կատարվում է Հաճախորդի վարկային հայտի քննարկման փուլում կազմված դրամական հոսքերի և իրական ցուցանիշների համապատասխանության ստուգման միջոցով:

2.9. Բացասական փաստերը, որոնք կարող են ավելացնել վարկային ռիսկի գործոնը և հանգեցնել Հաճախորդի կողմից վճարային պարտավորությունների չկատարմանը.

- տոկոսների/մայր գումարի 10 աշխատանքային օրից ավելի ժամկետանց մասի առաջացումը,
- տոկոսների մի քանի անգամ ժամկետանց մասի առաջացումը (3 և ավելի անգամ տվյալ վարկային գործարքի ընթացքում),
- Հաճախորդի հաշվին ներկայացված վճարման պահանջագրերի և կատարողական թերթիկների, վարկի գումարի 30%-ից ավելի առկայությունը,
- վճարման պահանջագրի 30 օրից ավել չվճարելը,
- վարկային գործարքով ամրագրված դրամական հոսքերի ապահովման չափի խախտում,
- Հաճախորդի/երաշխավորի վարկանիշի նվազում,
- այլ պարտավորությունների գծով ժամկետանց մասի առաջացում տվյալ պարտավորության 10% -ից ավելի գումարի չափով,
- Հաճախորդի համախառն պարտավորությունների էական աճը (անհամատեղելի եկամտի աճի հետ),
- Հաճախորդի կողմից նոր վարկերի ստացումը, որի մարման ժամկետը համընկնում է կնքված վարկային գործարքի մարման ժամկետի հետ և գումարը գերազանցում է նախկին գումարը 30%-ով,
- Հաճախորդի կապերի խզում այն կոնտրազենտների հետ որոնք էական նշանակություն ունեն Հաճախորդի ապրանքաշրջանառության գործընթացում,
- կոնտրազենտների հետ հաշվարկների կառուցվածքի էական վատթարացում,
- կոնտրազենտների հետ կապերի դիվերսիֆիկացման զգալի վատթարացում և որևէ կոնտրազենտից կախվածության ավելացում,
- Հաճախորդի արտաքին գործոնների փոփոխության (զների, պահանջարկի և այլն) նկատմամբ համարժեք արձագանքի բացակայությունը,
- կառավարման համակարգում պրոբլեմների առաջացումը (ղեկավարի, նրա տեղակալների, զլխավոր հաշվապահի փոփոխություն), սեփականտերերի փոփոխություն և պետական մարմինների հետ խնդիրների առաջացում,
- Հաճախորդի կողմից դրամական հոսքերի չապահովում, որոշակի ժամանակահատվածում բացասական սալդոյի առկայություն, հասույթի պլանային ծավալների համեմատ ավելցուկի կամ 30%-ով պակասորդի առկայություն, 30%-ով ավել ծախսերի ծավալի առկայություն, Հաճախորդի կողմից խոշոր վարկերի ստացում,

- վարկի հաշվին վճարային փաստաթղթերի վճարում, որը չի համապատասխանում վարկի նպատակին,
- գրավի առարկայի շուկայական արժեքի նվազում,
- վարկային պայմանագրով նախատեսված փաստաթղթերի հաճախորդի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ներկայացնելուց հրաժարվելը,
- Հաճախորդի ղեկավարության՝ վարկային կազմակերպության հետ շփումներից հրաժարվելը:

Հաճախորդի կողմից իր վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում վարկային կազմակերպության կողմից իրականացվում են հետևյալ միջոցառումները

**3. Հաճախորդի դրամական պարտավորությունների չկատարման նախազգուշացումը**

3.1. Հաճախորդի դրամական պարտավորությունների չկատարման նախազգուշացման ուղղությամբ միջոցառումները ներառում են.

- Հաճախորդի ընթացիկ գործունեության վիճակի և նրա կողմից ներկայացված ապահովվածության նկատմամբ հսկողության ուժեղացման հետ կապված միջոցառումներ,
- վարկի ապահովվածության պահպանման և ավելացման ուղղությամբ միջոցառումներ,
- վարկի վերադարձման գծով միջոցառումներ:

3.2. **Հաճախորդի ընթացիկ գործունեության վիճակի և նրա կողմից ներկայացված ապահովվածության նկատմամբ հսկողության ուժեղացման հետ կապված միջոցառումները** ներառում են.

- Հաճախորդի հետ բանակցությունների վարում,
- Հաճախորդից լրացուցիչ տեղեկությունների պահանջում,
- Հաճախորդի՝ վարկային կազմակերպության առջև դրամական պարտավորությունների չկատարման միտումների հայտնաբերման ուղղությամբ միջոցառումների ծավալների փոփոխում:

3.3. **վարկի ապահովվածության պահպանման և ավելացման ուղղություններով միջոցառումները** ներառում են.

- Հաճախորդի հետ կնքված պայմանագրով ամրագրված գրավի առարկայի պահպանման ուղղությամբ միջոցառումներ,
- Հաճախորդից գրավի ավելացման պահանջում,
- Հաճախորդի հետ կնքված գրավի պայմանագրի փոփոխում:

3.4. **վարկի վերադարձման գծով միջոցառումները** ներառում են.

- վարկի վաղաժամկետ մարման պահանջում,
- վարկի վաղաժամկետ մարման պահանջում՝ դրամական միջոցների անակցեպտ կարգով դուրս գրման պայմանով,
- վարկի վաղաժամկետ մարման պահանջում՝ զիջման պայմանի կիրառումով,
- վարկի վաղաժամկետ մարման պահանջում՝ Հաճախորդի ունեցվածքի և գրավի առարկայի բռնագանձումով,
- տրամադրված վարկի պայմանների փոփոխում (տոկոսադրույքի, ժամկետի փոփոխում),
- վարկային գծի, օվերդրաֆտի, երաշխիքի, երաշխավորության, ակրեդիտիվի դադարեցում (եթե դա հնարավոր է):

3.5. Մոնիտորինգի մասնակից ստորաբաժանումները պետք է պարզեն Հաճախորդի կողմից դրամական պարտավորությունների չկատարման պատճառները, այդ թվում Հաճախորդի հետ համատեղ կազմեն միջոցառումների պլան կատարված խախտումների վերացման ուղղությամբ: Միջոցառումների պլանով պետք է սահմանվեն բացասական փաստերի վերացման ժամկետները և իրականացվելիք միջոցառումները:

3.6. Եթե բացասական փաստերը նշված ժամկետում չի հաջողվել վերացնել, մոնիտորինգի մասնակից ստորաբաժանման իրավասու աշխատակիցը կազմում են վարկային գործարքի պայմանների փոփոխության կամ վարկի վաղաժամկետ մարման առաջարկություն և ներկայացնում են գործադիր տնօրենին:

3.7. Դրամական պարտավորությունների չկատարման նախազգուշացմանը ուղղված պատժամիջոցների միջոցառումները կատարվում են հաշվի առնելով վարկային գործարքի պայմանները, միջոցառումների էֆեկտիվությունը և դրանց իրականացումից հնարավոր բացասական հետևանքները:

3.7.1. Պատժամիջոցները կախված են հետևյալ գործոններից.

- Հաճախորդի դասից,

- Վարկային կազմակերպության և Հաճախորդի միջև հարաբերությունների բնույթից,
  - իրականացվող միջոցառումներին Հաճախորդի մոտեցումից (ինքնակամ կամ ստիպողաբար միջոցառումներ),
  - Հաճախորդի պարատավորությունների կատարման ժամկետի մնացորդից,
  - միջոցառումների գծով իրականացվող ծախսերի և վարկի մնացորդի հարաբերակցությունից:
- 3.8. Իրավասու մարմնի կողմից վարկի վաղաժամկետ մարման պահանջի վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում.
- Հաճախորդին ուղարկվում է գրավոր նախապահանջ վարկի մարման ուղղությամբ և գրավի առարկայի բռնագանձման ծանուցում,
  - ծարկային բաժնին հանձնարարվում է միջոցների բռնագանձման գծով անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման համար,
  - երաշխավորի տեղեկացում,
  - անհրաժեշտության դեպքում գրավի առարկայի պահպանում,
  - ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ ըստ անհրաժեշտության: